600.0397.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

9 դեկտեմբերի 2016 թվականի №397Ա
ք.Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ (ԿԵՂՏԱՋՐԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 38-րդ, 39-րդ, 40-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 2-ի №295Ն որոշումը և հաշվի առնելով «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 25-ի հայտը և նույն ամսվա 30-ի №ԿԼ/05 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիա՝ մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը գործողության ժամկետով:
2. Հաստատել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման լիցենզիայի պայմանները՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1. *ՀԾԿՀ 14.06.2017թ. №248Ա որոշում*
2. *ՀԾԿՀ 06.11.2017թ. №476Ա որոշում*
3. *ՀԾԿՀ 20.12.2017թ. №569Ա որոշում*
4. *ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա որոշում*
5. *ՀԾԿՀ 17.05.2019թ. №147Ա որոշում*
6. *ՀԾԿՀ 31.07.2019թ. №287Ա որոշում*
7. *ՀԾԿՀ 23.10.2019թ. №392Ա որոշում*
8. *ՀԾԿՀ 27.11.2020թ. №423Ա որոշում*

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ

«Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի պայմաններ

1. Լիցենզիայում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն լիցենզիայում օգտագործվող հասկացությունները սահմանվում են հետևյալ կերպ.
   1) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.
   2) **Լիցենզավորված անձ՝** «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերություն.
   3) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրամադրված սույն պաշտոնական փաստաթուղթը, որը հաստատում է Սպասարկման տարածքում Բաժանորդներին Ծառայություններ մատուցելու Լիցենզավորված անձի իրավունքը և պարտականությունը.
   4) **Ծառայություններ՝** խմելու ջրի մատակարարման (այսուհետ՝ ջրամատակարարում) և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ: Այն դեպքում, երբ Բաժանորդի հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված է միայն ջրամատակարարման կամ միայն ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայության մատուցում կամ ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում, ապա Լիցենզավորված անձի կողմից Ծառայությունների մատուցումը վերաբերում է միայն տվյալ ծառայությանը (ծառայություններին): Կեղտաջրերի մաքրումն

իրականացվում է Լիցենզավորված անձին Վարձակալության պայմանագրով հանձնված կեղտաջրերի մաքրման կայանների միջոցով.

5) **Ջրային համակարգ՝** Սպասարկման տարածքում Վարձակալության պայմանագրով կամ այլ իրավական հիմքով Լիցենզավորված անձի տիրապետմանն ու օգտագործմանը հանձնված ջրային համակարգեր և դրանց առնչվող այլ գույք.

6) **Բաժանորդ՝** իրավաբանական կամ ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն, կամ անհատ ձեռնարկատեր, որը Լիցենզավորված անձի հետ կնքել է Ծառայությունների մատուցման պայմանագիր կամ դիմել է Ծառայությունների մատուցման պայմանագրի կնքման համար.

7) **Վարձակալության պայմանագիր՝** Հայաստանի Հանրապետության կառավարության, Լիցենզավորված անձի և «Վեոլիա Օ-Կոմպանի Ժեներալ դեզ Օ» ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված «Երևան Ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «ՆՈՐ ԱԿՈՒՆՔ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագիր.

8) **Կանոններ** խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններ.

9) **Սպասարկման տարածք՝** Լիցենզիայի №1 հավելվածով ամրագրված Ծառայությունների մատուցման տարածք.

10) **Մանրածախ Ծառայությունների մատուցում՝** Լիցենզավորված անձի կողմից Սպասարկման տարածքում գտնվող Բաժանորդներին Ծառայությունների մատուցում՝ մանրածախ սակագներով.

11) **Մեծածախ ջրամատակարարում՝** Լիցենզավորված անձի կողմից Սպասարկման տարածքից դուրս խմելու ջրի վաճառք՝ մեծածախ սակագնով.

12) **Մեծածախ ջրահեռացում՝** Լիցենզավորված անձի կողմից Սպասարկման տարածքից դուրս ջրահեռացման ծառայության մատուցում՝ մեծածախ սակագնով.

13) **Բազիսային սակագներ՝** Ջրային համակարգը վարձակալության տրամադրելու համար անցկացված մրցույթի արդյունքում ձևավորված և Լիցենզիայի №3 հավելվածի №1 աղյուսակի 1-ին, *7-9-րդ կետերում* ամրագրված սակագներ.

14) **Բազիսային մեծություններ՝** Ջրային համակարգը վարձակալության տրամադրելու համար անցկացված մրցույթի արդյունքում ձևավորված և Լիցենզիայի №3 հավելվածի №1 աղյուսակի *3-6-րդ կետերում* ամրագրված մեծություններ, որոնք օգտագործվում են սակագների ճշգրտման համար.

15) **Ֆորս մաժոր՝** արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Լիցենզավորված անձի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջինիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Սույն Լիցենզիայի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները, ապստամբությունները, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված ակտերը, վերջիններիս գործողությունները կամ անգործությունը: Սույն ենթակետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը սույն կետում նշվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք Ֆորս մաժոր ճանաչելու համար:

(1-ին կետը փոփ. ՀԾԿՀ 14.06.2017թ. №248Ա, ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա)

2. Լիցենզիայի գործողության ժամկետը

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:
3. Լիցենզիան գործում է մինչև 2031 թվականի դեկտեմբերի 31-ը:

3. Գործունեության իրականացման տարածքը

4. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով նախատեսված գործունեությունն իրականացնել Սպասարկման տարածքում:

4. Լիցենզավորված անձի կողմից մատուցվող Ծառայությունները և դրանց էությունը կազմող գործառույթները

5. Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Ջրային համակարգով մատուցել Ծառայություններ Լիցենզիայի 3-րդ կետով սահմանված ժամկետում և Սպասարկման տարածքում:
6. Լիցենզավորված անձի կողմից Ծառայությունների մատուցումը ներառում է հետևյալ գործառույթները՝
   1) Ջրային համակարգի կառավարում, շահագործում, պահպանում, բարելավում.
   2) Հանձնաժողովի սահմանված օրինակելի ձևերին համապատասխան Ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքում.
   3) Ջրային համակարգին Բաժանորդների ներքին ցանցի միացում.
   4) մատուցված Ծառայությունների հաշվառման կազմակերպում և ապահովում.
   5) մատուցված Ծառայությունների դիմաց գումարների գանձում.
   6) մակերևույթային ջրերի հեռացման ստորգետնյա համակարգի շահագործում և պահպանում.
   7) հակահրդեհային նպատակներով և ցայտաղբյուրներով ջրի ապահովում:
7. Լիցենզավորված անձն իրավունք ունի իրականացնել լիցենզավորված գործունեությանն առնչվող այլ գործառույթներ:

5. Լիցենզավորված անձի գործունեության պայմանները

8. Լիցենզավորված անձը պարտավոր է իր գործունեությունն իրականացնել Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքին, Լիցենզիային, Կանոններին, Ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերին և Հանձնաժողովի այլ իրավական ակտերին համապատասխան:
9. Լիցենզավորված անձն իրավունք չունի Լիցենզիան օտարել կամ այլ կերպ փոխանցել մեկ այլ անձի, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի և՝ պայմանով, որ նախապես ստացել է Հանձնաժողովի գրավոր թույլտվությունը:
10. Լիցենզավորված անձն իրավունք չունի Ջրային համակարգը կամ նրա մի մասը հանձնել ենթավարձակալության, անհատույց կամ հատուցելի օգտագործման, բացառությամբ Լիցենզիայի 11-րդ կետով նախատեսված դեպքի:
11. Լիցենզավորված անձը տեխնիկական հնարավորությունների դեպքում պարտավոր է փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման կամ շահագործման նպատակով թույլատրել միանալ Ջրային համակարգին կամ պայմանագրի հիման վրա թույլատրել դրա օգտագործումը, եթե այն չի վտանգում Ծառայությունների

մատուցմանը, չի հանգեցնում Լիցենզիայի պայմանների կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմատիվ պահանջների խախտմանը: Լիցենզավորված անձի կողմից սահմանված՝ Ջրային համակարգին միացման պահանջները պետք է լինեն հրապարակային, հիմնավոր և ոչ խտրական:

12. Լիցենզավորված անձը պարտավոր է վարել այլ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության առանձնացված հաշվապահական հաշվառում: Լիցենզավորված անձի կողմից լիցենզավորված գործունեությանը չառնչվող այլ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության իրականացումը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:
13. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Լիցենզիայի №2 հավելվածով ամրագրված սպասարկման որակի ցուցանիշները:
14. Լիցենզավորված անձը պարտավոր է Մեծածախ ջրամատակարարման, Մեծածախ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերը մինչև կնքումը ներկայացնել Հանձնաժողովի համաձայնեցմանը:
15. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի սահմանած կարգով Հանձնաժողով է ներկայացնում ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվություններ և տեղեկատվություններ, ինչպես նաև հաշվետվություններ և տեղեկատվություններ՝ Լիցենզիայի №2 հավելվածով սահմանված սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ:
16. Լիցենզավորված անձի գործունեության հաշվապահական հաշվառումը, հաշվետվությունները և տեղեկատվությունները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:
17. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում իր գործունեության մասին Հանձնաժողով ներկայացրած հաշվետվությունների և տեղեկատվությունների հավաստիության համար:
18. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի պահանջով և սահմանած ժամկետում սպառիչ տեղեկատվություն ներկայացնել լիցենզավորված գործունեության վերաբերյալ:
19. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե այն Լիցենզավորված անձի կողմից չի համարվում գաղտնի և նշված չէ որպես «Անձին վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցելու, որ ներկայացված տեղեկատվության (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական

տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել իր առևտրային գործունեության շահերին: Հանձնաժողովը քննարկում է գաղտնիության վերաբերյալ Լիցենզավորված անձի հիմնավորումները և իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվություն չհրապարակելու վերաբերյալ վերջինիս դիմումը:

20. Լիցենզավորված անձը յուրաքանչյուր տարի՝ մինչև հուլիսի 1-ը, պարտավոր է իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ու հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով, ինչպես նաև աուդիտորական եզրակացությունն ու դրա հետ կապված հրապարակման ենթակա այլ նյութերը տեղադրել իր պաշտոնական կայքում:
21. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ անցկացված իրավասու մարմինների ստուգումների եզրակացությունները և արձանագրությունները (ակտերը), ինչպես նաև տեխնիկական աուդիտի եզրակացությունը և հաշվետվությունը:
22. Լիցենզավորված անձը պարտավոր է հնարավորինս սեղմ ժամկետում Հանձնաժողով հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտման:

6. Սակագներ

23. Լիցենզավորված անձի կողմից Մանրածախ Ծառայությունների մատուցման, Մեծածախ ջրամատակարարման և Մեծածախ ջրահեռացման սակագները սահմանում է Հանձնաժողովը՝ Լիցենզիայի №3 հավելվածով սահմանված կարգով և ժամկետներում:
24. Լիցենզիայի 23-րդ կետով նախատեսված սակագներն ուժի մեջ են մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

7. Գործունեության վերահսկում

25. Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:
26. Լիցենզիայի պայմանների կատարման նկատմամբ վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչներն իրավունք ունեն ազատ մուտք գործել Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պարտավոր է համագործակցել Հանձնաժողովի հետ և աջակցել վերջինիս (նրա լիազորած ներկայացուցիչներին):

27. Հանձնաժողովի լիազորած ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են Լիցենզավորված անձի ներքին կանոնակարգը և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:
28. Հանձնաժողովը օրենքով իրեն վերապահված իրավասությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով իրավասու է իրականացնել Լիցենզավորված անձի գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում):

8. Տուժանքներ

29. Հանձնաժողովը, Լիցենզավորված անձի կողմից Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի դրույթների, Լիցենզիայի պայմանների, Հանձնաժողովի այլ իրավական ակտերի պահանջների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում, իր իրավասությունների սահմաններում իրավասու է տալ խախտումները վերացնելու հանձնարարականներ և կիրառել տուժանքների հետևյալ տեսակները.
    1) նախազգուշացում.
    2) տուգանք.
    3) լիցենզիայի գործողության կասեցում.
    4) լիցենզիայի գործողության դադարեցում:
30. Լիցենզավորված անձի կողմից՝
    1) Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի դրույթները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի քսանհազարապատիկից մինչև քառասունհազարապատիկի չափով.
    2) Լիցենզիայի պայմանները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից մինչև քսանհազարապատիկի չափով.
    3) Հանձնաժողովի իրավական ակտերի պահանջները չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհազարապատիկից մինչև տասհազարապատիկի չափով:
31. Լիցենզիայի 29-րդ կետում նշված տուժանքների կիրառումը Լիցենզավորված անձին չի ազատում հիմնական պարտավորության կատարումից և Բաժանորդի առջև պատասխանատվությունից:

32. Լիցենզավորված անձի նկատմամբ տուժանք չի կիրառվում, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

9. Լիցենզիայում փոփոխությունների կատարումը, Լիցենզիայի վերաձևակերպումը, գործության ժամկետի երկարաձգումը, կասեցումը և դադարեցումը

33. Լիցենզիայում փոփոխությունները կատարվում են ինչպես Հանձնաժողովի նախաձեռնությամբ, այնպես էլ Լիցենզավորված անձի առաջարկությամբ:
34. Լիցենզիայում փոփոխություններ կատարելու վերաբերյալ Լիցենզավորված անձի առաջարկությունը ներկայացվում և քննարկվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:
35. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների պատշաճ կատարումն ապահովելու համար:
36. Լիցենզիայի վերաձևակերպումը, գործողության ժամկետի երկարաձգումը, կասեցումը և դադարեցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հանձնաժողովի կողմից սահմանված կարգի համաձայն:

10. Պատշաճ ծանուցում

37. Լիցենզավորված անձը համարվում է պատշաճ ձևով ծանուցված, եթե տեղեկացումը կամ փաստաթղթերը ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ, կամ էլեկտրոնային համակարգի միջոցով (այդ թվում՝ հայտատուի նշած էլեկտրոնային փոստի միջոցով), ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով կամ հանձնվել են ստացականով:

Հավելված №1
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ
հաստատված Լիցենզիայի պայմանների

ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՏԱՐԱԾՔԸ

1. Երևան քաղաք

2. Արագածոտնի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Աշտարակ	Աշտարակ քաղաք
2)	Ապարան	Ապարան քաղաք
3)	Թալին	Թալին քաղաք
4)	Սադունց	Սադունց գյուղ
5)	Արագածոտն	Արագածոտն գյուղ
6)	Բերքառատ	Բերքառատ գյուղ
7)	Գեղադիր	Գեղադիր գյուղ
8)	Գեղաձոր	Գեղաձոր գյուղ
9)	Դպրևանք	Դպրևանք գյուղ
10)	Զարինջա	Զարինջա գյուղ
11)	Կարբի	Կարբի գյուղ
12)	Կոշ	Կոշ գյուղ
13)	Հնաբերդ	Հնաբերդ գյուղ
14)	Նորաշեն (Արագածի շրջ.)	Նորաշեն գյուղ
15)	Նոր Արթիկ	Նոր Արթիկ գյուղ
16)	Շամիրամ	Շամիրամ գյուղ
17)	Շենկանի	Շենկանի գյուղ
18)	Ոսկեհատ	Ոսկեհատ գյուղ
19)	Ոսկեվազ	Ոսկեվազ գյուղ
20)	Ջրամբար	Ջրամբար գյուղ
21)	Ռյա թազա	Ռյա թազա գյուղ
22)	Սաղմոսավան	Սաղմոսավան գյուղ
23)	Կանիաշիր	Կանիաշիր գյուղ
24)	Սասունիկ	Սասունիկ գյուղ
25)	Սուսեր	Սուսեր գյուղ
26)	Վարդաբլուր	Վարդաբլուր գյուղ
27)	Ուշի	Ուշի գյուղ
28)	Ուջան	Ուջան գյուղ
29)	Օհանավան	Օհանավան գյուղ
30)	Օշական	Օշական գյուղ

3. Արարատի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Արտաշատ	Արտաշատ քաղաք
2)	Արարատ	Արարատ քաղաք
3)	Մասիս	Մասիս քաղաք
4)	Վեդի	Վեդի քաղաք
5)	Աբովյան	Աբովյան գյուղ
5.1)	*Ազատաշեն*	*Ազատաշեն գյուղ*
6)	Ազատավան	Ազատավան գյուղ
7)	Այգավան	Այգավան գյուղ
8)	Այգեզարդ	Այգեզարդ գյուղ
9)	Այգեպատ	Այգեպատ գյուղ
10)	Այգեստան	Այգեստան գյուղ
11)	Այնթապ	Այնթապ գյուղ
12)	Արալեզ	Արալեզ գյուղ
13)	Արարատ	Արարատ գյուղ
14)	Արաքսավան	Արաքսավան գյուղ
15)	Արբաթ	Արբաթ գյուղ
16)	Արգավանդ	Արգավանդ գյուղ
17)	Արևաբույր	Արևաբույր գյուղ
18)	Արևշատ	Արևշատ գյուղ
19)	Բաղրամյան	Բաղրամյան գյուղ
20)	Բարձրաշեն	Բարձրաշեն գյուղ
21)	Բերդիկ	Բերդիկ գյուղ
22)	Բերքանուշ	Բերքանուշ գյուղ
23)	Բյուրավան	Բյուրավան գյուղ
24)	Բուրաստան	Բուրաստան գյուղ
25)	Գեղանիստ	Գեղանիստ գյուղ
26)	Գետազատ	Գետազատ գյուղ
27)	Գետափնյա	Գետափնյա գյուղ
28)	Դալար	Դալար գյուղ
29)	Դաշտավան	Դաշտավան գյուղ
30)	Դաշտաքար	Դաշտաքար գյուղ
31)	Դարակերտ	Դարակերտ գյուղ
32)	Դարբնիկ	Դարբնիկ գյուղ
33)	Դեղձուտ	Դեղձուտ գյուղ
34)	Դիմիտրով	Դիմիտրով գյուղ
35)	Դիտակ	Դիտակ գյուղ
36)	Դվին	Դվին գյուղ
37)	Երասխ	Երասխ գյուղ

38)	Զորակ	Զորակ գյուղ
39)	Լանջազատ	Լանջազատ գյուղ
40)	Խաչփառ	Խաչփառ գյուղ
41)	Կանաչուտ	Կանաչուտ գյուղ
42)	Հայանիստ	Հայանիստ գյուղ *(ջրամատակարարումն իրականացվում է Բաժանորդների հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա և Լիցենզավորված անձին Վարձակալությնան պայմանագրով հանձնված գույքի շրջանակներում)*
43)	Հնաբերդ	Հնաբերդ գյուղ
44)	Ղուկասավան	Ղուկասավան գյուղ
45)	Մասիս	Մասիս գյուղ
46)	Մարմարաշեն	Մարմարաշեն գյուղ
47)	Մխչյան	Մխչյան գյուղ
48)	Մրգանուշ	Մրգանուշ գյուղ
49)	Մրգավան	Մրգավան գյուղ
50)	Մրգավետ	Մրգավետ գյուղ
51)	Նշավան	Նշավան գյուղ
52)	Նորաբաց	Նորաբաց գյուղ
53)	Նորաշեն	Նորաշեն գյուղ
54)	Նոր Խարբերդ	Նոր Խարբերդ գյուղ
55)	Նոր կյանք	Նոր կյանք գյուղ
56)	Նոր Կյուրին	Նոր Կյուրին գյուղ
57)	Նոր ուղի	Նոր ուղի գյուղ
58)	Շահումյան	Շահումյան գյուղ
59)	Ոսկետափ	Ոսկետափ գյուղ
60)	Ոստան	Ոստան գյուղ
61)	Ջրահովիտ	Ջրահովիտ գյուղ
62)	Ջրաշեն	Ջրաշեն գյուղ
63)	Սիսավան	Սիսավան գյուղ
64)	Վանաշեն	Վանաշեն գյուղ
65)	Վարդաշեն	Վարդաշեն գյուղ
66)	Գինեվետ	Գինեվետ գյուղ
67)	Վերին Արտաշատ	Վերին Արտաշատ գյուղ
68)	Վերին Դվին	Վերին Դվին գյուղ
69)	Տափերական	Տափերական գյուղ

70)	Ուրցաձոր	Ուրցաձոր
71)	Փոքր Վեդի	Փոքր Վեդի գյուղ
72)	Քաղցրաշեն	Քաղցրաշեն գյուղ

(լրաց. 20.12.2017թ. №569Ա, փոփոխ. 17.05.2019թ. №147Ա)

4. Արմավիրի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Արմավիր (Հոկտեմբերյան)	Արմավիր (Հոկտեմբերյան) քաղաք
2)	Վաղարշապատ (Էջմիածին)	Վաղարշապատ (Էջմիածին) քաղաք
3)	Մեծամոր	Մեծամոր քաղաք
4)	Ակնալիճ	Ակնալիճ գյուղ
5)	Աղավնատուն	Աղավնատուն գյուղ
6)	Ամբերդ	Ամբերդ գյուղ
7)	Այգեկ	Այգեկ գյուղ
8)	Այգեշատ (Արմավիրի շրջ.)	Այգեշատ գյուղ
9)	Արագած	Արագած գյուղ
10)	Արշալույս	Արշալույս գյուղ
11)	Արտամետ	Արտամետ գյուղ
12)	Արտիմետ	Արտիմետ գյուղ
13)	Արևաշատ	Արևաշատ գյուղ
14)	Բաղրամյան (Բաղրամյանի շրջ.)	Բաղրամյան գյուղ
15)	Բաղրամյան (Էջմիածնի շրջ.)	Բաղրամյան գյուղ
16)	Դալարիկ	Դալարիկ գյուղ
17)	Դաշտ	Դաշտ գյուղ
18)	Դողս	Դողս գյուղ
19)	Մայիսյան	Մայիսյան գյուղ
20)	Լեռնագոգ	Լեռնագոգ գյուղ
21)	Լեռնամերձ	Լեռնամերձ գյուղ
22)	Լուկաշին	Լուկաշին գյուղ
23)	Խանջյան	Խանջյան գյուղ
24)	Խորոնք	Խորոնք գյուղ
25)	Ծաղկալանջ	Ծաղկալանջ գյուղ
26)	Ծաղկունք	Ծաղկունք գյուղ
27)	Ծիածան	Ծիածան գյուղ
28)	Հայթաղ	Հայթաղ
29)	Հովտամեջ	Հովտամեջ գյուղ

30)	Մերձավան	Մերձավան գյուղ
31)	Մյասնիկյան	Մյասնիկյան գյուղ
32)	Մրգաշատ	Մրգաշատ գյուղ
33)	Մրգաստան	Մրգաստան գյուղ
34)	Մուսալեռ	Մուսալեռ գյուղ
35)	Նորակերտ	Նորակերտ գյուղ
36)	Նորապատ	Նորապատ գյուղ
37)	Նորավան	Նորավան գյուղ
38)	Շահումյան	Շահումյան գյուղ
39)	Շահումյանի թռչնաֆաբրիկա	Շահումյանի թռչնաֆաբրիկա գյուղ
40)	Ոսկեհատ	Ոսկեհատ գյուղ
41)	Պտղունք	Պտղունք գյուղ
42)	Գեղակերտ	Գեղակերտ գյուղ
43)	Փարաքար	Փարաքար գյուղ
44)	Ֆերիկ	Ֆերիկ գյուղ

5. Գեղարքունիքի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Գավառ (Կամո)	Գավառ (Կամո) քաղաք
2)	Ճամբարակ	Ճամբարակ քաղաք
3)	Մարտունի	Մարտունի քաղաք
4)	Սևան	Սևան քաղաք
		Գագարին գյուղ
5)	Վարդենիս	Վարդենիս քաղաք
6)	Բերդկունք	Բերդկունք գյուղ
7)	Գանձակ	Գանձակ գյուղ
8)	Լիճք	Լիճք գյուղ
9)	Լճաշեն	Լճաշեն գյուղ
10)	Լճափ	Լճափ գյուղ
11)	Ծակքար	Ծակքար գյուղ
12)	Ծովազարդ	Ծովազարդ գյուղ
13)	Կարմիրգյուղ	Կարմիրգյուղ գյուղ
14)	Հայրավանք	Հայրավանք գյուղ
15)	Ներքին Գետաշեն	Ներքին Գետաշեն գյուղ
16)	Նորաշեն	Նորաշեն գյուղ
17)	Նորատուս	Նորատուս գյուղ
18)	Չկալովկա	Չկալովկա գյուղ

19)	Սարուխան	Սարուխան գյուղ
20)	Վարսեր	Վարսեր գյուղ

6. Լոռու մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Վանաձոր	Վանաձոր քաղաք
2)	Ալավերդի	Ալավերդի քաղաք
3)	Ախթալա	Ախթալա քաղաք
4)	Թումանյան	Թումանյան քաղաք
5)	Սպիտակ	Սպիտակ քաղաք
6)	Ստեփանավան	Ստեփանավան քաղաք
7)	Տաշիր	Տաշիր քաղաք
8)	Ամրակից	Ամրակից գյուղ
9)	Այգեհատ	Այգեհատ գյուղ
10)	Անտառամուտ	Անտառամուտ գյուղ
11)	Արևածագ	Արևածագ գյուղ
12)	Աքորի	Աքորի գյուղ
13)	Գյուլագարակ	Գյուլագարակ գյուղ
14)	Գուգարք	Գուգարք գյուղ
15)	Դարպաս	Դարպաս գյուղ
16)	Եղեգնուտ	Եղեգնուտ գյուղ
17)	Լեռնապատ	Լեռնապատ գյուղ
18)	Լեռնավան	Լեռնավան գյուղ
19)	Ծաթեր	Ծաթեր գյուղ
20)	Կարմիր Աղեկ	Կարմիր Աղեկ գյուղ
21)	Կուրթան	Կուրթան գյուղ
22)	Հագվի	Հագվի գյուղ
23)	Հաղպատ	Հաղպատ գյուղ *(ջրամատակարարումն իրականացվում է Բաժանորդների հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա և Լիցենզավորված անձին Վարձակալության պայմանագրով հանձնված գույքի շրջանակներում)*
24)	Հոբարձի	Հոբարձի գյուղ
25)	Ձորագետ	Ձորագետ գյուղ
26)	Ձորագյուղ	Ձորագյուղ գյուղ
27)	Մեդովկա	Մեդովկա գյուղ

28)	Մեծ Պարնի	Մեծ Պարնի գյուղ
29)	Նեղոց	Նեղոց գյուղ
30)	Շահումյան	Շահումյան գյուղ
31)	Շիրակամուտ	Շիրակամուտ գյուղ
32)	Շնող	Շնող գյուղ
33)	Ջրաշեն	Ջրաշեն գյուղ
34)	Սարատովկա	Սարատովկա գյուղ
35)	Վահագնաձոր	Վահագնաձոր գյուղ
36)	Վահագնի	Վահագնի գյուղ
37)	Վարդաբլուր	Վարդաբլուր գյուղ
38)	Փամբակ	Փամբակ գյուղ
39)	Քարկոփ	Քարկոփ գյուղ
40)	Օձուն	Օձուն գյուղ

(փոփոխ. 17.05.2019թ. №147Ա)

7. Կոտայքի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Հրազդան	Հրազդան քաղաք
2)	Աբովյան	Աբովյան քաղաք
3)	Բյուրեղավան	Բյուրեղավան քաղաք
4)	Եղվարդ	Եղվարդ քաղաք
5)	Ծաղկաձոր	Ծաղկաձոր քաղաք
6)	Չարենցավան	Չարենցավան քաղաք
7)	Ալափարս	Ալափարս գյուղ
8)	Ակունք	Ակունք գյուղ
9)	Առինջ	Առինջ գյուղ
10)	Արագյուղ	Արագյուղ
11)	Արամուս	Արամուս գյուղ
12)	Արգել	Արգել գյուղ
13)	Արզնի	Արզնի գյուղ
14)	Արտավազ	Արտավազ գյուղ
15)	Բալահովիտ	Բալահովիտ գյուղ
16)	Բջնի	Բջնի գյուղ
17)	Գետամեջ	Գետամեջ գյուղ
18)	Զովունի	Զովունի գյուղ
19)	Զորավան	Զորավան գյուղ
20)	Թեղենիք	Թեղենիք գյուղ
21)	Կաթնաղբյուր	Կաթնաղբյուր գյուղ
22)	Կարենիս	Կարենիս գյուղ

23)	Կոտայք	Կոտայք գյուղ
24)	Մայակովսկի	Մայակովսկի գյուղ
25)	Մրգաշեն	Մրգաշեն գյուղ
26)	Նոր Արտամետ	Նոր Արտամետ գյուղ
27)	Նոր Գեղի	Նոր Գեղի գյուղ
28)	Նոր գյուղ	Նոր գյուղ
29)	Նոր Երզնկա	Նոր Երզնկա գյուղ
30)	Նուռնուս	Նուռնուս գյուղ
31)	Պռոշյան	Պռոշյան գյուղ
32)	Պտղնի	Պտղնի գյուղ
33)	Ջրառատ	Ջրառատ գյուղ
34)	Ջրվեժ	Ջրվեժ գյուղ
35)	Գետարգել	Գետարգել գյուղ
36)	Սարալանջ	Սարալանջ գյուղ
37)	Սոլակ	Սոլակ գյուղ
38)	Վերին Պտղնի	Վերին Պտղնի գյուղ
39)	Քաղսի	Քաղսի գյուղ
40)	Քանաքեռավան	Քանաքեռավան գյուղ
41)	Քասախ	Քասախ գյուղ
42)	Քարաշամբ	Քարաշամբ գյուղ
43)	Ֆանտան	Ֆանտան գյուղ

8. Շիրակի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Գյումրի	Գյումրի քաղաք
2)	Արթիկ	Արթիկ քաղաք
3)	Մարալիկ	Մարալիկ քաղաք
4)	Ազատան	Ազատան գյուղ
5)	Ախուրիկ	Ախուրիկ գյուղ
6)	Ախուրյան	Ախուրյան գյուղ
7)	Ամասիա	Ամասիա գյուղ
		Արեգնադեմ գյուղ
		Գտաշեն գյուղ
		Մեղրաշատ գյուղ
		Ողջի գյուղ
		Ջրաձոր գյուղ
8)	Այգաբաց	Այգաբաց գյուղ
9)	Անուշավան	Անուշավան գյուղ
10)	Աշոցք	Աշոցք գյուղ

		Բավրա գյուղ
		Ջույգաղբյուր գյուղ
		Թավշուտ գյուղ
		Կարմրավան գյուղ
		Ղազանչի գյուղ
		Մեծ Սեպասար գյուղ
		Սարագյուղ գյուղ
		Փոքր Սեպասար գյուղ
11)	Առափի	Առափի գյուղ
12)	Բայանդուր	Բայանդուր գյուղ
13)	Բենիամին	Բենիամին գյուղ
14)	Գետք	Գետք գյուղ
15)	Գուսանագյուղ	Գուսանագյուղ գյուղ
16)	Երազգավորս	Երազգավորս գյուղ
17)	Լուսակերտ	Լուսակերտ գյուղ
18)	Կապս	Կապս գյուղ
19)	Կառնուտ	Կառնուտ գյուղ
20)	Հայկավան	Հայկավան գյուղ
21)	Հայրենյաց	Հայրենյաց գյուղ
22)	Հացիկ	Հացիկ գյուղ
23)	Հոռոմ	Հոռոմ գյուղ
24)	Հովտաշեն	Հովտաշեն գյուղ
25)	Հովունի	Հովունի գյուղ
26)	Ձորակապ	Ձորակապ գյուղ (ջրամատակարարումն իրականացվում է Բաժանորդների հետ կնքված Ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա և Լիցենզավորված անձին Վարձակալության պայմանագրով հանձնված գույքի շրջանակներում)
27)	Ղարիբջանյան	Ղարիբջանյան
28)	Մայիսյան	Մայիսյան գյուղ
29)	Մարմաշեն	Մարմաշեն գյուղ
30)	Մեղրաշեն	Մեղրաշեն գյուղ
31)	Նոր Կյանք	Նոր Կյանք գյուղ
32)	Շիրակ	Շիրակ գյուղ
33)	Ոսկեհասկ	Ոսկեհասկ գյուղ
34)	Սարալանջ	Սարալանջ գյուղ
35)	Սարապատ	Թորոսգյուղ գյուղ
		Գոգհովիտ գյուղ
		Հարթաշեն գյուղ

		Հողմիկ գյուղ
		Մուսայելյան գյուղ
		Սալուտ գյուղ
		Վարդաղբյուր գյուղ
36)	Սարատակ	Սարատակ գյուղ
37)	Սպանդարյան	Սպանդարյան գյուղ
38)	Վահրամաբերդ	Վահրամաբերդ գյուղ
39)	Վարդաքար	Վարդաքար գյուղ
40)	Փանիկ	Փանիկ գյուղ
41)	Քեթի	Քեթի գյուղ

9. Սյունիքի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Կապան	Կապան քաղաք
2)	Գորիս	Գորիս քաղաք
		Խնձորեսկ գյուղ
		Հարթաշեն գյուղ
		Քարահունջ գյուղ
3)	Մեղրի	Մեղրի քաղաք
		Ագարակ քաղաք
		Կարճևան գյուղ
		Վարդանիձոր գյուղ
4)	Սիսիան	Սիսիան քաղաք
5)	Աշոտավան	Աշոտավան գյուղ
6)	Գորայք	Սպանդարյան գյուղ
7)	Աճանան	Աճանան գյուղ
8)	Հացավան	Հացավան գյուղ
9)	Իշխանասար	Իշխանասար գյուղ
10)	Սյունիք	Սյունիք գյուղ
11)	Տաթև	Շինուհայր գյուղ
		Հալիձոր գյուղ
		Հարժիս գյուղ
		Խոտ գյուղ
12)	Տեղ	Տեղ գյուղ
		Արավուս գյուղ
		Կոռնիձոր գյուղ
		Քարաշեն գյուղ
13)	Ույծ	Ույծ գյուղ

10. Վայոց ձորի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Եղեգնաձոր	Եղեգնաձոր քաղաք
2)	Ջերմուկ	Ջերմուկ քաղաք
3)	Վայք	Վայք քաղաք
4)	Գետափ	Գետափ գյուղ
5)	Զառիթափ	Գոմք գյուղ
		Նոր Ազնաբերդ գյուղ
6)	Մալիշկա	Մալիշկա գյուղ
7)	Շատին	Շատին գյուղ

11. Տավուշի մարզ

h/h	Համայնքի անվանումը	Բնակավայրի անվանումը
1)	Իջևան	Իջևան քաղաք
2)	Այրում	Այրում քաղաք
		Արճիս գյուղ (մասնակի)
		Դեղձավան գյուղ
		Հաղթանակ գյուղ
3)	Բերդ	Բերդ քաղաք
4)	Դիլիջան	Դիլիջան քաղաք
5)	Նոյեմբերյան	Նոյեմբերյան քաղաք
		Բերդավան գյուղ
6)	Ազատամուտ	Ազատամուտ գյուղ
7)	Լուսաձոր	Լուսաձոր գյուղ

Հավելված №2
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ
հաստատված Լիցենզիայի պայմանների

ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

1. Լիցենզավորված անձը պարտավոր է Սպասարկման տարածքի բաժանորդներին ապահովել ամենօրյա ջրամատակարարմամբ:
2. Լիցենզավորված անձը պարտավոր է տարեկան առնվազն երկու անգամ՝ տվյալ տարվա ապրիլ և սեպտեմբեր ամիսների 15-25-ն ընկած ժամանակահատվածներում, Սպասարկման տարածքի Բաժանորդներին հասանելի առնվազն մեկ թերթում և իր պաշտոնական կայքում հրապարակել Սպասարկման տարածքի ջրամատակարարման գրաֆիկը, համապատասխանաբար մայիսի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ը ներառյալ և հոկտեմբերի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ գործողության ժամկետներով: Ջրամատակարարման գրաֆիկը պետք է կազմվի և հրապարակվի հասցեական՝ այնպես, որ Սպասարկման տարածքի ցանկացած Բաժանորդ հնարավորություն ունենա ծանոթանալ իր ջրամատակարարման գրաֆիկին:
3. Լիցենզավորված անձն իրավունք ունի՝ Հանձնաժողովի հետ համաձայնեցնելով, ջրամատակարարման գրաֆիկը թերթի փոխարեն հրապարակել տեղեկատվական այլ միջոցներով:
4. Ջրամատակարարման գրաֆիկներում պետք է ներառվեն Բաժանորդներին ջրամատակարարմամբ ապահովելու երաշխավորված ժամանակահատվածները, որոնք կարող են խախտվել միայն վթարային, պլանային և ֆորս մաժորի հետևանքով ընդհատումների դեպքում:
5. Ջրամատակարարման գրաֆիկի հրապարակումից առնվազն երեք աշխատանքային օր առաջ Լիցենզավորված անձը պարտավոր է Սպասարկման տարածքի Բաժանորդներին հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երեք օր անընդմեջ, օրական առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով՝ ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում իրազեկել

նոր գրաֆիկի հրապարակման ժամկետի, թերթի և իր պաշտոնական կայքի անվանումների մասին:

6. Լիցենզավորված անձը պարտավոր է Սպասարկման տարածքի Բաժանորդներին յուրաքանչյուր ամիս նախորդ ամսում սպառված ջրի դիմաց ներկայացվող վճարման փաստաթղթերում (անկախ վճարման ձևից) ներառել նաև տվյալ Բաժանորդի հաջորդ ամսվա ջրամատակարարման գրաֆիկով երաշխավորված ժամերը: Շուրջօրյա ջրամատակարարման դեպքում վճարման փաստաթուղթը պետք է ներառի «ջրամատակարարման գրաֆիկ՝ 24 ժամ» բառերը, իսկ մնացած դեպքերում՝ «ջրամատակարարման գրաֆիկ՝ __ ժամ» բառերը և ջրամատակարարման գրաֆիկի սկզբի և ավարտի ժամն ու րոպեն:
7. Ջրամատակարարման տևողության ցուցանիշները սահմանվում են Վարձակալության պայմանագրով: Բաժանորդների ջրամատակարարումն իրականցվում է համաձայն նշված ցուցանիշների:
8. Ջրամատակարարման տևողությունները բարելավելիս առաջնահերթությունը պետք է տրվի առավել կարճ տևողությամբ ջրամատակարարում ունեցող Բաժանորդներին:
9. 2019 թվականի հոկտեմբերի 1-ից Լիցենզավորված անձը պարտավոր է Սպասարկման տարածքի յուրաքանաչյուր Բաժանորդի ժամը 7:00-24:00-ն ընկած ժամանակահատվածում ապահովել ամենօրյա առնվազն 6-ժամյա ջրամատակարարմամբ:
10. Սպասարկման տարածքում նոր բնակավայրերի ավելացման դեպքում Հանձնաժողովի կողմից սահմանվում է դրանց ջրամատակարարման նվազագույն տևողության ցուցանիշների բարելավման անցումային ժամանակաշրջան:

ԳԼՈՒԽ 2. ՎԹԱՐԱՅԻՆ, ՊԼԱՆԱՅԻՆ ԵՎ ՖՈՐՍ ՄԱԺՈՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

11. Բաժանորդների ջրամատակարարման ընդհատման տևողությունը չպետք է գերազանցի 36 ժամը, իսկ 500 մմ-ից մեծ տրամագծով մայրուղային ջրատարներով իրականացվող ջրամատակարարման ընդհատման դեպքում՝ 72 ժամը:

    (փոփ. 14.06.2017թ. №248Ա)

12. Պլանային և Վթարային ընդհատումների սկզբի ժամ է համարվում հրապարակված ջրամատակարարման գրաֆիկով նախատեսված այն ժամը, որից հետո ջրամատակարարում չի իրականացվել, Ֆորս մաժորի հետևանքով ընդհատումների

սկզբի ժամ է համարվում Ֆորս մաժորի ավարտի ժամը, իսկ ջրամատակարարման վերականգնման ժամը կարող է չհամընկնել հրապարակված ջրամատակարարման գրաֆիկի հետ: Մատակարարը պարտավոր է պահպանել պլանային ընդհատումների համար նախապես հայտարարված սկզբի ժամերը:

13. Լիցենզավորված անձը պարտավոր է ջանքեր ներդնել Լիցենզիայի գործողության ժամկետի ընթացքում ջրամատակարարման ընդհատումների քանակը նվազեցնելու նպատակով: Այդ նպատակով նաև Լիցենզավորված անձը մինչև 2022 թվականի հոկտեմբերի 1-ը Երևան քաղաքում, իսկ մինչև 2027 թվականի հոկտեմբերի 1-ը՝ Սպասարկման տարածքի մնացած քաղաքային բնակավայրերում պետք է ներդնի Ջրային համակարգի հեռահար կառավարման ժամանակակից համակարգ:

ԳԼՈՒԽ 3. ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

14. Լիցենզավորված անձը պարտավոր է պլանային ընդհատումների սկզբի և ավարտի ժամկետների մասին, դրանց իրականացման օրվանից առնվազն 3 օր առաջ, իր պաշտոնական կայքում հրապարակել նախնական տեղեկատվություն, իսկ մինչև ջրամատակարարման պլանային ընդհատումների նախորդող օրը՝ դրանում կատարված փոփոխությունները:

15. Լիցենզավորված անձը պարտավոր է Բաժանորդներին առնվազն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ առնվազն երկու անգամ, նվազագույնը մեկ ժամ ընդմիջումով՝ ժամը 18:00-23:00-ն ընկած ժամանակահատվածում, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով, իրազեկել հաջորդ օրվա պլանային ընդհատումների սկզբի և ավարտի ժամկետների մասին: Սույն պահանջը հանդիսանում է նվազագույն պահանջ և չի բացառում իրազեկման այլ եղանակների զուգահեռ կիրառումը:

(փոփ. 14.06.2017թ. №248Ա)

16. Վթարային ընդհատումների դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է վթարային ընդհատման օրվա, սկզբի ժամի և ջրամատակարարման վերականգնման կանխատեսվող ժամի մասին հնարավորինս սեղմ ժամկետում հեռուստատեսությամբ, գրավոր, էլեկտրոնային եղանակով, հեռախոսազանգի միջոցով կամ անհատապես ծանուցման այլ եղանակով իրազեկել Բաժանորդներին:

(փոփ. 14.06.2017թ. №248Ա)

17. *Ուժը կորցրած է ճանաչվել 14.06.2017թ. №248Ա*

ԳԼՈՒԽ 4. ՇՈՒՐՋՕՐՅԱ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅՔ

18. Սկսած 2017 թվականի հոկտեմբերի 1-ից Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել Սպասարկման տարածքի Բաժանորդներին հասանելի շուրջօրյա հեռախոսակապ:
19. Շուրջօրյա հեռախոսակապի միջոցով Բաժանորդի դիմելու դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է իրազեկել առնվազն իր սպասարկման գրասենյակների և էլեկտրոնային կապի հասցեների մասին, որոնցով Բաժանորդը կկարողանա տեղեկատվություն հաղորդել կամ ստանալ դիմումների, դրանց ընթացքի, ջրամատակարարման ընդհատումների պատճառների և վերականգնման ժամկետների, սպառած ջրի արժեքի և քանակության, վճարման ժամկետների, ջրի որակի, Լիցենզավորված անձի և Բաժանորդի իրավունքների, պարտականությունների և այլնի վերաբերյալ:
20. Լիցենզավորված անձը պարտավոր է ունենալ պաշտոնական կայք, որը հնարավորություն կտա տեղեկատվություններ ստանալ ինչպես Լիցենզավորված անձի կողմից իրականացվող ծրագրերի, այնպես էլ ջրամատակարարման գրաֆիկների, սպասարկման գրասենյակների աշխատաժամերի, Լիցենզավորված անձի և Բաժանորդների իրավունքների, պարտականությունների և այլնի վերաբերյալ:
21. Լիցենզավորված անձը պարտավոր է մինչև 2018 թվականի հունվարի 1-ը գործարկել համակարգ, որը հնարավորություն կտա իր պաշտոնական կայքի միջոցով Բաժանորդներից ընդունել դիմումներ: Նույն ժամկետում Լիցենզավորված անձը պարտավոր է իր պաշտոնական կայքի միջոցով հնարավորություն ընձեռել Բաժանորդներին՝ անվճար ծանոթանալ իրենց Ծառայությունների մատուցմանն առնչվող առնվազն վերջին մեկ տարվա տեղեկատվությանը, այդ թվում՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքներին և կատարված վճարումներին, գրանցման միջոցով հաղորդել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը: Նշված համակարգը պետք է երաշխավորի Բաժանորդների անհատական տվյալների գաղտնիությունը: Բաժանորդներին տրամադրվող տեղեկատվության ձևը մինչև 2017 թվականի հոկտեմբերի 1-ը պետք է համաձայնեցվի Հանձնաժողովի հետ:

ԳԼՈՒԽ 5. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻՆ ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄԸ

22. Լիցենզավորված անձը պարտավոր է պատշաճ ուսումնասիրել Բաժանորդներից ստացված բոլոր դիմումները:
23. Լիցենզավորված անձը պարտավոր է ընդունել ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր (այդ թվում՝ հեռախոսակապի միջոցով) և էլեկտրոնային փոստով հղված դիմումները, եթե Կանոններով առանձին ընթացակարգ սահմանված չէ: Բաժանորդի գրավոր դիմումին տրվում է գրավոր պատասխան, բանավորին՝ բանավոր պատասխան, իսկ էլեկտրոնային փոստով ստացվածին՝ էլեկտրոնային փոստով պատասխան:
24. Լիցենզավորված անձը պարտավոր է Բաժանորդի դիմումին պատասխանել այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե առանձին դեպքերի համար Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ Կանոններով այլ ժամկետ սահմանված չէ: Լիցենզավորված անձը պարտավոր է սպառիչ պատասխանել դիմումին՝ հանգամանորեն ներկայացնելով դրա առնչությամբ գործող օրենսդրական դաշտը, Լիցենզավորված անձի և Բաժանորդների իրավունքներն ու պարտականությունները և այն բոլոր հանգամանքները, որոնք անհրաժեշտ կլինեն վերջինիս՝ ամբողջական պատկերացում կազմելու ներկայացված դիմումի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 6. ՆՈՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՄԻԱՑՈՒՄԸ

25. Նոր բաժանորդների միացման կարգը սահմանվում է Կանոններով, որով Բաժանորդներին սնող անհատական ջրագծերի և կոյուղագծերի կառուցմանն ուղղված Լիցենզավորված անձի համար լրացուցիչ ներդրումային պարտավորություններ չեն նախատեսվի: Դրանք կառուցվում են Բաժանորդների կողմից և հանդիսանում են վերջիններիս սեփականությունը: Լիցենզավորված անձը պատասխանատվություն չի կրում դրանց շահագործման և սպասարկման համար:
26. Նոր միացման դեպքում կառուցվող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, որը ներառում է Լիցենզավորված անձի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից մինչև նոր բաժանորդի հետ սահմանազատման կետն ընկած հատվածը, նոր բաժանորդի հայեցողությամբ և հաշվին կառուցում է Լիցենզավորված անձը կամ նոր բաժանորդը, բացառությամբ առևտրային

հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղակայման, որն իր հաշվին իրականացնում է Լիցենզավորված անձը: Լիցենզավորված անձի կողմից նոր համակարգը կառուցելու դեպքում կառուցման ծախսերը Հանձնաժողովի կողմից սահմանված առանձին դեպքերում կարող են փոխհատուցվել նաև վարկային կամ ներդրումային ծրագրերի իրականացման միջոցով:

(փոփ. 14.06.2017թ. №248Ա)

ԳԼՈՒԽ 7. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ԱՌՋԵՎ

27. Սույն հավելվածով նախատեսված սպասարկման որակի ցուցանիշների խախտման համար Կանոններով Լիցենզավորված անձի համար կսահմանվեն Բաժանորդների առջև պատասխանատվության միջոցներ՝ ֆինանսական տույժեր:

ԳԼՈՒԽ 8. ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՈՐԱԿԻ ԱՅԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

28. Հանձնաժողովն իրավասու է Կանոններով սահմանել սպասարկման որակի այլ ցուցանիշներ՝ Բաժանորդների սպասարկման որակի բարելավման և կատարելագործման նպատակով, եթե դրանց ներդրմամբ առաջացած լրացուցիչ ծախսերը կփոխհատուցվեն սակագնով: Այդպիսի ցուցանիշները պետք է հենվեն միջազգային լավագույն փորձի վրա:

Հավելված №3
Հայաստանի Հանրապետության հանրային
ծառայությունները կարգավորող հանձնաժողովի
2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ
հաստատված Լիցենզիայի պայմանների

ՍԱԿԱԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

1. 2017 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ գործում են սույն հավելվածի №1 աղյուսակում ամրագրված Բազիսային սակագները, որոնք ամրագրվում են Հանձնաժողովի որոշմամբ:
2. 2018 թվականի հունվարի 1-ից (երկրորդ հաշվարկային տարվա սկզբից) հետո սակագները յուրաքանչյուր տարի հաշվարկվում են՝ ելնելով սույն հավելվածի №1 աղյուսակում Լիցենզիայի գործողության բոլոր 15 տարիների համար բերված Բազիսային սակագներից և սույն հավելվածի 5-12-րդ կետերում բերված ճշգրտման բանաձևերից:
3. Սույն հավելվածի №1 աղյուսակի 1-ին կետում ամրագրված Բազիսային սակագները Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագների գումարն են:
4. Սույն հավելվածի №1 աղյուսակում ամրագրված Բազիսային սակագները ենթարկվում են ճշգրտման՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.
   1) մանրածախ ջրամատակարարման ծավալը,
   2) սղաճը,
   3) Լիցենզավորված անձին մատակարարվող էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությունը:
5. Մանրածախ ջրամատակարարման ծավալների տատանումներով պայմանավորված Բազիսային սակագնի ճշգրտումն իրականացվում է երկրորդ հաշվարկային տարվանից: Ճշգրտման մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta T_{bi} = \frac{T_{i-1} \times (V_{b(i-1)} - V_{f(i-1)}) \times (1 - \Delta \mathrm{EP_b})}{V_{bi}} \times 0.7$$

որտեղ՝

i-ն վարձակալության հաշվարկային հերթական տարին է,

ΔT_{bi}-ն i-րդ տարվա համար մանրածախ ջրամատակարարման ծավալներով պայմանավորված՝ սույն հավելվածի №1 աղյուսակի 1-ին կետում ամրագրված Բազիսային սակագնի ճշգրտման չափն է:

T_{i-1}-ը հաշվարկային տարվան նախորդող տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման գումարային սակագինն է՝ առանց սույն հավելվածի 17-րդ կետով նախատեսված նվազեցման,

$V_{b(i-1)}$-ը հաշվարկային տարվան նախորդող տարվա համար սույն հավելվածի №1 աղյուսակի *3-րդ կետում* ամրագրված մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալն է,

$V_{f(i-1)}$-ը հաշվարկային տարվան նախորդող այն 12 ամիսների համար Բաժանորդներին մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալն է, որի վերաբերյալ Բազիսային սակագնի ճշգրտման հայտի ներկայացման պահին կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայման գործընթաց սկսելու պահին առկա է համապատասխան տեղեկատվություն, ընդ որում, երկրորդ հաշվարկային տարվա Բազիսային սակագնի ճշգրտման ժամանակ սույն ցուցանիշը որոշելիս կարող է հիմք ընդունվել նաև մինչև Լիցենզիայի ուժի մեջ մտնելն ընկած ամիսների համար համապատասխան սպասարկման տարածքի մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը,

V_{bi}-ն հաշվարկային տարվա համար սույն հավելվածի №1 աղյուսակի 2-րդ կետում ամրագրված մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալն է,

ΔEP_b-ն գործակից է, որը հաշվի է առնում Բազիսային սակագնի էլեկտրաէներգիայի սակագներով ճշգրտվող բաժնեմասը՝ համաձայն սույն հավելվածի №1 աղյուսակի *5-րդ կետի*,

0.7-ը գործակից է, որը հաշվի է առնում մանրածախ ջրամատակարարման ծավալների տատանումներով պայմանավորված ռիսկերի բաշխումը Լիցենզավորված անձի և Բաժանորդների միջև:

(5-րդ կետը փոփոխ. ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա)

6. Սույն հավելվածի 4-րդ կետում նշված բոլոր գործոններով ճշգրտվող սույն հավելվածի №1 աղյուսակի 1-ին կետում ամրագրված Բազիսային սակագինը վարձակալության երկրորդ տարվանից սկսած հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$T_i = T_{bi}\left(\Delta I_b \times KI_i + \Delta EP_b \times KEP_i + \Delta NAP_b\right) + \Delta T_{bi} + \Delta T'_i - AR_{f(i-1)}/V_{bi},$$

$i = 2,3,.....15,$

որտեղ՝

T_i-ն i-րդ հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագինն է,

T_{bi}-ն i-րդ հաշվարկային տարվա համար սույն հավելվածի №1 աղյուսակի 1-ին կետում ամրագրված Բազիսային սակագինն է,

ΔI_b-ն գործակից է, որը հաշվի է առնում Բազիսային սակագնի սղաճով ճշգրտվող բաժնեմասը՝ համաձայն սույն հավելվածի №1 աղյուսակի *4-րդ կետի*,

KI_i-ն i-րդ հաշվարկային տարվա համար սղաճով պայմանավորված ճշգրտման գործակիցն է,

KEP_i-ն i-րդ հաշվարկային տարվա համար էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված ճշգրտման գործակիցն է,

ΔNAP_b-ն գործակից է, որը հաշվի է առնում Բազիսային սակագնի ճշգրտման չենթարկվող բաժնեմասը՝ համաձայն սույն հավելվածի №1 աղյուսակի *6-րդ կետի*,

$\Delta T'_i$-ն սույն հավելվածի 16-րդ կետի համաձայն որոշված մեծությունն է,

$AR_{f(i-1)}$-ն Ջրային համակարգն այլ նպատակներով օգտագործումից (այդ թվում՝ այլ անձանց վարձակալության կամ օգտագործման տրամադրում) և խմելու ջուրը ոռոգման նպատակով մատակարարելուց ստացվող լրացուցիչ հասույթն է՝ հաշվարկային տարվան նախորդող այն 12 ամիսների համար, որոնց վերաբերյալ Բազիսային սակագնի ճշգրտման հայտի ներկայացման պահին կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ վերանայման գործընթաց սկսելու պահին առկա է համապատասխան տեղեկատվություն:

(6-րդ կետը փոփոխ. 06.11.2017 №476Ա, ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա)

7. Սղաճով պայմանավորված ճշգրտման գործակիցը (KI_i) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KI_i = KI_{i-1} \cdot \frac{II_{i-1}}{100}, \qquad i=2,3.....15,$$

որտեղ՝

KI_{i-1}-ը (i-1)-րդ հաշվարկային տարվա ճշգրտման գործակիցն է: Վարձակալության հաշվարկային առաջին տարվա KI գործակիցը ընդունվում է հավասար 1-ի:

$Π_{i-1}$-ը i-րդ հաշվարկային տարվա Բազիսային սակագնի ճշգրտման հայտի ներկայացման ամսվան նախորդող (եթե հնարավոր չէ, ապա դրան նախորդող) ամսվա (աճողական՝ ընթացիկ տարվա սկզբից հաշվարկված ժամանակահատված) սպառողական գների ինդեքսն է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ հրապարակված Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից:

8. Էլեկտրաէներգիայի սակագների փոփոխությամբ պայմանավորված ճշգրտման գործակիցը (KEP_i) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$KEP_i = \frac{EP_i}{EP_0}, \quad i=2,3.....15,$$

որտեղ՝

EP_i-ն հաշվարկային տարում Ծառայությունների մատուցման ճշգրտված սակագներն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող էլեկտրաէներգիայի սակագների հիման վրա հաշվարկված Լիցենզավորված անձին մատակարարվող էլեկտրաէներգիայի միջին կշռված սակագինն է,

EP_0-ն վարձակալության առաջին տարվա սկզբում գործող էլեկտրաէներգիայի սակագների հիման վրա հաշվարկված Լիցենզավորված անձին մատակարարվող էլեկտրաէներգիայի միջին կշռված սակագինն է:

9. Հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագները կազմում են՝
   1) այդ տարվա ճշգրտված սակագնի (T_i) 100 տոկոսն այն Բաժանորդների համար, որոնց համար իրականացվում են ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ,
   2) այդ տարվա ճշգրտված սակագնի (T_i) 85 տոկոսը, եթե Բաժանորդը միացված չէ ջրահեռացման համակարգին:

10. Մեծածախ ջրամատակարարման սակագինը (T^1_{wi}) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$T^1_{wi} = T_i * 0.2, \; i=2,3.....15:$$

11. Մեծածախ ջրահեռացման սակագինը (T^2_{wi}) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$T^2_{wi} = T_i * 0.1, \; i=2,3.....15:$$

12. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման սակագինը (T^3_{wi}) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$T^3_{wi} = T^3_{wbi} \cdot \frac{T_i}{T_{bi}}, \quad i=2,3.....15,$$

որտեղ՝

T^3_{wi}-ն հաշվարկային տարվա համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության ճշգրտված սակագինն է,

T^3_{wbi}-ն հաշվարկային տարվա համար «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» փակ բաժնետիրական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման ծառայության Բազիսային սակագինն է, որն ամրագրված է սույն հավելվածի №1 աղյուսակի *9-րդ կետում*:

(12-րդ կետը փոփոխ. ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա)

13. Եթե սույն հավելվածի 6-րդ կետում նշված բանաձևով i-րդ հաշվարկային տարվա համար հաշվարկված Մանրածախ Ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի (T_i) և Մանրածախ Ծառայությունների մատուցման գործող գումարային սակագնի տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա i-րդ հաշվարկային տարվա համար վերահաստատվում են Ծառայությունների մատուցման գործող սակագները: Հանձնաժողովի որոշմամբ հաստատված Մանրածախ Ծառայությունների մատուցման գործող սակագները Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սուբսիդավորվելու դեպքում i-րդ հաշվարկային տարվա համար հաշվարկված Մանրածախ Ծառայությունների մատուցման ճշգրտված գումարային սակագնի (T_i) համեմատությունը կատարվում է նաև Մանրածախ Ծառայությունների մատուցման՝ Բաժանորդների համար փաստացի գործող գների (Հանձնաժողովի որոշմամբ հաստատված սակագնի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տրամադրվող սուբսիդիայի տարբերության) գումարային մեծության հետ, և եթե այդ տարբերությունը չի գերազանցում 0.5%-ը, ապա i-րդ հաշվարկային տարվա համար հաստատվում են Ծառայությունների մատուցման՝ Բաժանորդների համար փաստացի գործող գներին հավասար սակագներ: Սույն կետում նշված տարբերությունը հաշվի չի առնվում հաջորդ հաշվարկային տարիների Բազիսային սակագների ճշգրտման ժամանակ:

(13-րդ կետը փոփոխ. ՀԾԿՀ 23.10.2019թ. №392Ա)

14. Ճշգրտման բանաձևերում օգտագործվող բոլոր Բազիսային մեծությունները բերվում են սույն հավելվածի №1 աղյուսակում:
15. Գոյություն ունեցող Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագնային համակարգի՝ Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի առաջարկությամբ փոփոխության դեպքում, T_i ճշգրտված սակագինը կհամարվի նոր սակագնային համակարգի միջին կշռված միադրույք (դրամ/մ^3) սակագինը:
16. Հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման ճշգրտված սակագնի (T_i) և հաշվարկային տարվան նախորդող տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման գործող սակագնի (T_{i-1}) տարբերությունը (ΔT_i), Լիցենզավորված անձի և Հանձնաժողովի փոխադարձ համաձայնությամբ՝ Հանձնաժողովի որոշմամբ, սույն կետով նախատեսված ճշգրտումից հետո կարող է հաշվի առնվել հաջորդ կամ հետագա տարիների սակագները հաշվարկելիս: Այդ դեպքում հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագինը հավասար կլինի հաշվարկային տարվան նախորդող տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման սակագնին: Հաջորդ կամ հետագա տարիների սակագներում հաշվի առնվող մեծությունը ($\Delta T'_i$) որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Delta T_i' = \frac{\Delta T_i * V_{bi} * 1.08^n}{V_{b(i+n)}}$$

որտեղ՝

n-ը հաշվարկային և $\Delta T'_i$ մեծության կիրառման ժամանակահատվածի միջև ընկած տարիների թիվն է,

$V_{b(i+n)}$-ը (i+n)-րդ տարվա համար սույն հավելվածի №1 աղյուսակի *3-րդ կետում* ամրագրված մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալն է:

ΔT_i մեծությունը հետագա երկու և ավելի հաշվարկային տարիների սակագներում հաշվի առնելու դեպքում բաժանվում է մասերի և յուրաքանչյուր մասի համար հաշվարկվում է առանձին:

(16-րդ կետը փոփոխ. 06.11.2017 №476Ա, ՀԾԿՀ 28.11.2018թ. №433Ա)

17. Հանձնաժողովի կողմից սույն հավելվածի համաձայն հաշվարկված՝ հաշվարկային տարվա Մանրածախ Ծառայությունների մատուցման ճշգրտված սակագները կարող են նվազեցվել Հայաստանի Հանրապետության

կառավարության կողմից առաջարկվող սուբսիդիայի մեծությանը համապատասխան:

18. Սույն հավելվածում օգտագործվող բոլոր սակագները բերվում են առանց ավելացված արժեքի հարկի:
19. Լիցենզավորված անձն ընթացիկ տարվա գործող սակագների գործողության մեկ տարին լրանալու օրվանից՝ ոչ ուշ, քան 101 և ոչ շուտ, քան 116 աշխատանքային օր առաջ սահմանված կարգով Հանձնաժողով է ներկայացնում տվյալ հաշվարկային տարվա համար (բացառությամբ առաջին հաշվարկային տարվա) իր կողմից առաջարկվող Ծառայությունների մատուցման ճշգրտված սակագների հաշվարկը՝ հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերով:
20. Լիցենզավորված անձի կողմից սույն հավելվածի 19-րդ կետով ամրագրված ժամկետներում Ծառայությունների մատուցման սակագների ճշգրտման հայտ չներկայացվելու դեպքում Հանձնաժողովը կարող է սեփական նախաձեռնությամբ սկսել Ծառայությունների մատուցման սակագների վերանայում՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Լիցենզավորված անձին:
21. Հանձնաժողովն իրավասու է անհրաժեշտության դեպքում Լիցենզավորված անձից պահանջել ճշգրտված սակագների հաշվարկին վերաբերող լրացուցիչ տեղեկատվություն և փաստաթղթեր, որի մասին գրավոր տեղեկացնում է Լիցենզավորված անձին՝ նշելով ներկայացման ողջամիտ ժամկետ:
22. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովի կողմից նշված ժամկետում ներկայացնել անհրաժեշտ տեղեկատվությունը և փաստաթղթերը:
23. Հանձնաժողովը, ուսումնասիրելով և քննարկելով Լիցենզավորված անձի կողմից ներկայացված հաշվարկը և հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթերը, իր իրավասության շրջանակում որոշում է ընդունում հայտի փաթեթը Հանձնաժողով ներկայացնելուց հետո՝ 80 աշխատանքային օրվա ընթացքում:

Աղյուսակ 1.

№	Անվանումներ	Նշանա-կումներ	Վարձակալության հաշվարկային տարիներ (i)														
			1 (2017)	2 (2018)	3 (2019)	4 (2020)	5 (2021)	6 (2022)	7 (2023)	8 (2024)	9 (2025)	10 (2026)	11 (2027)	12 (2028)	13 (2029)	14 (2030)	15 (2031)
1.	Բազիսային մանրածախ սակագին, դրամ/մ^3	T_b	150	155	162	147	147	177	177	170	160	152	137	128	123	115	108
2.	Սույն հավելվածի 16-րդ կետի համաձայն որոշված՝ նախորդ հաշվարկային տարիներից i-րդ հաշվարկային տարի տեղափոխված սակագնի մեծություն, դրամ/մ^3	$\Delta T'_i$	0	0	0	0	0	-1.468	0	0	12.135	0	0	0	0	0	0
3.	Մանրածախ ջրամատակարարման բազիսային ծավալ, մլն մ^3	V_b	123	127	124	128	133	143	148	151	155	159	162	165	168	171	174
4.	Սղաճով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔI_b	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%	60%
5.	Էլեկտրաէներգիայի սակագներով ճշգրտվող սակագնի բաժնեմաս	ΔEP_b	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%	13%
6.	Բազիսային սակագնի ճշգրտման չենթարկվող բաժնեմաս	ΔNAP_b	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%	27%
7.	Մեծածախ ջրամատակա-րարման բազիսային սակագին, դրամ/մ^3	T^1_{wb}	30.0	31.0	32.4	29.4	29.4	35.1064	35.4	34.0	34.427	30.4	27.4	25.6	24.6	23.0	21.6
8.	Մեծածախ ջրահեռացման բազիսային սակագին, դրամ/մ^3	T^2_{wb}	15.0	15.5	16.2	14.7	14.7	17.5532	17.7	17.0	17.2135	15.2	13.7	12.8	12.3	11.5	10.8
9.	«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպո-լիտեն» փակ բաժնետի-րական ընկերության ստորգետնյա ջրերի հեռացման բազիսային սակագին, դրամ/մ^3	T^3_{wb}	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0	9.0

1. Սույն աղյուսակի 7-րդ կետով ներկայացվող Մեծածախ ջրամատակարարման բազիսային սակագինը հավասար է 1-ին և 2-րդ կետերով ներկայացվող սակագների գումարի 20%-ին, իսկ 8-րդ կետով ներկայացվող Մեծածախ ջրահեռացման բազիսային սակագինը՝ 1-ին և 2-րդ կետերով ներկայացվող սակագների գումարի 10%-ին:
(Աղյուսակ 1-ը փոփոխ. 06.11.2017 №476Ա, 28.11.2018թ. №433Ա, 31.07.2019թ. №287Ա, 27.11.2020թ. №423Ա որոշումներով)